

հանգի լեռնային մասի համար, բայց չիրագործվեց։ Ժողովը ցանկություն չայտնեց, որ ընկերությունն խորհուրդը մշակի այդ փորձի ծրագիրը և առաջարկի ընդհանուր ժողովին։

Նիստի վերջում հանդես բերվեցին ընկերության ներքին թղթակցի անգամ Վ. Նիկողոսյանի ուղարկած չոր մեզերը, դուրսն, ոսպը և քեփանգ քարը։ Գրություն մասին գրված փորձիկ յոդուածը որոշվեց տպագրել Գիտությունների ակադեմիայի օրգանում։

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ինչպես յայտնի է, շուտով կառավարությունը պետք է ձեռնարկի չինիզացիայի ներդրումն առնող տանող երկաթուղու գիծը։ Երազիրը արդեն պատրաստ է և նշանակված են ապագայ կայարանների տեղերը։

Բաւական դժուարություն է ներկայացնում կայարան նշանակել այնտեղ, ուր գիծը դուրս է գալիս Լուսից գեղի փամբակ։ Այդտեղ կայ մի մեծ կենտրոն, Մեծ Ղարաբաղի մասը, որը պետք է համարվի կայարանի տեղ։ Սակայն ծրագիրը առնուադիր է թողել այդ կետը և կայարան նշանակել Նաղաբուր գիւղում, որովհետև գնացքի կառավարման համար դժուար է անցնել միանգամից շատ մեծ տարածություն, որ կը պահանջի ճանապարհը, եթէ կայարանը լինէր Մեծ Ղարաբաղի լիսայնում։

Սակայն կարելի է այնպէս անել, որ Մեծ Ղարաբաղի լիսայնում ունենալ կիսակայարան (պոլուստանով) և այդպիսով մի կողմից ինքը չը գրկվի երկաթուղու բարձրներից և միւս կողմից երկաթուղին օգտվի նրա յարմարություններից։ Մեծ Ղարաբաղի լիսայնը բազմաթիւ մի գիւղ է, ունի բնակչություն համար գեղերից տներ, ունի խանութներ, գոմիւմ է Գիւղիկներից եկող ճանապարհի վրա և կարող է ծառայել իբրեւ գեղեցիկ ամառանոց Թիֆլիսի և այլ քաղաքների բնակիչների համար։

Ցանկալի է, որ երկաթուղու չինությունը գործիս դուրս կանգնած անձինք Մեծ Ղարաբաղի լիսայնի նման մի նշանաւոր կէտ գտնաւորութեան չը տալին։

Երկաթուղին պէտք է անցնի նրա միջով, այդ արդէս վճարված է, մնացել է կիսակայարան ծրագրելը, որ մեծ ծախսեր չի պահանջի, և բացի դրանից կը ներկայացնի մեծ յարմարություններ։

Մեր կարծիքով, առհասարակ երկաթուղային գծեր անցկացնելիս պէտք է ամեն ջանք գործ դնել, որ երկրի մէջ իրանց բերքերով, կլիմայով, առատական յարաբերութիւններով կարեւոր կէտերը և կենտրոնները դուրս չը մնան գծերից, ինչպէս այդ շատ անգամ պատահում է։

ՄԻ ՊՏՈՅ ԱՆՍԱԼԻԱԿԱՒԻ ԳԻՒԼԵՐՈՒՄ

Բարեկենդանի արձակուրդներին այցելելով Արաքսաբերդից դէպի արեւելք գտնվող մի քանի գիւղեր, աւելորդ չենք համարում հետեւել նկատորութիւններն անել նրանց մասին։

Այս կողմի գիւղացիները ձմեռը պարապ են անցկացնում. արհեստներով նրանք չեն զբաղվում, իսկ անտառների բացակայութեան չորհրդի և ձիւնապատ լեռների անմատչելի լինելու պատճառով, որոտընդուն ամենին տեղի չէ ունենում։ Այս անգործութիւնը տեսում է նոյնքան վերջից ըսկած մինչև ապրիլ ամիսը, երբ դաշտերը ձիւնից ազատվում են։ Բացառութիւն պէտք է համարել մէկ երկու գիւղ, ուր ձիւնահան է գտնվում, ինչպէս, օրինակ, Կուրկիւմ գիւղը, որ ունի երկու ձիւնահան. ձիւնահաններով գիւղացիք պատրաստում են կտաւատի իւղ, որը գործ են ածում թէ վառելիքի և թէ ուտելիքի համար։ Ձիւնահանների այցելումն չի գտնի ոչ մի կատարելագործված մեքենայ, ոչ մի արդիւնաբերական առաջադիմութիւն. ամեն ինչ նահապետական և զանաւորվ է կատարվում այնպիսով։

Պարապութիւնը և ցուրտ կլիման առաջ են բերել գիւղացիների մէջ մի ազգի սովորութիւն, որը արդէն կարելի է անտ համարել. դա չափազանց օղի գործածելն է. գինին յարգ չունի գիւղացիների աչքում, ինչպէս օղին, չը նայելով, որ աւելի է ծան է, քան օղին։ Օղեմոլութեան հետ, իբրեւ անտ, գիւղերում տարածված է նաև ծխելը, իսկ թղթախաղը, որը իբրեւ ժամանակ անցկացնելու միջոց պէտք է ընդունված լինէր

կարծես, այս կողմերը դեռ ևս մտքը չէ գործել։ Գրան փոխարինում են օդաների երկնայինները, որտեղ պատմում են հեքիաթներ և առակներ և առաջարկվում են հանելուկներ, շուտասուրդներ և այլն։

Գիւղացիների անգործութիւնը խանգարվում է բարեկենդանին, երբ տեղի են ունենում հարսանիքները և պարերը, որոնք գիւղացու զուարճութեան տեղերն են։ Յրտի պատճառով պարերը կատարվում են երեկոները գոմերում։ Պարտունք մի ընդարձակ և խնամքով մաքրած գոմ է, որի անգործութեան մատնված ընտելիները այդ երեկոյ հիւր են լինում օտար գոմում։ Հանդիսատեսները, որոնց մէջ նորահարսները և աղջիկները աչքի են ընկնում նոր և մաքուր պարզ հագուստով, հաւաքվում են և գոմի մէջտեղ նստում, իսկ երկու սեռի երիտասարդներն ու պատանիները չըման են բռնում չորս պատերի երկարութեամբ և խմբական պար կազմում կամ փողի՝ ականջ լրացնող եղանակներով տակտի համաձայն և կամ բուն ժողովրդական պարերգեր երգելով։ Վերջիններս սիրահարական բովանդակութիւն ունեն և մեծ մասամբ ցոլացնում են կամ դաշտային զբաղմունքները և կամ հասարակական աղէտներն ու սղոյութիւնները։

Նորութիւններից դուրկ և անշարժութեան մատնված գիւղացին առհասարակ մեծ հետաքրքրութեամբ է լսում լուրեր հեռուոր երկիրների, մանաւանդ իր եղբայրակիցների մասին և մարդ չէ յոգնում նրանց պարզամիտ հարցերին պատասխանելուց։ Նրանք արտնշում են, որ իրանց մէջ կարդացող չունեն, և որ սեն ու սպիտակը հասկանալ չեն կարողանում, ապա թէ ոչ լրագիր կը ստանային, գրքեր կը կարդային և իրանք էլ խաւարի մէջ չէին մնայա։

Գ. Տ. — Պ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

Փետրվարի 26-ին

Այսօր, ինչպէս ձեզ հեռագրեցի, առաւօտեան ժամը 11-ին, արտակարգ գնացքով Արմաիրից հասաւ Բոստով վեհափառ կաթողիկոսը։ Նոր-Նախիջևանի կողմից ընտրված պատգամաւորները ընդառաջ էին գնացել Արմաիր։

Երկաթուղու վազմունքի ներկայացան Վեհափառին նահանգապետի օգնականը՝ Գրիկով, գեներալ Մանդրիկին և ուրիշ բարձրաստիճան անձինք, իսկ կայարանում սպասում էին գնացքի քաղաքներից և գիւղերից եկած պատգամաւորները։ Առաջինը ներկայացաւ Բոստովի քաղաքագլուխ Ե. Ն. Խմէշիցիկին և խնդրելով չը մերժել քաղաքի աղ ու հացը, որչափ Վեհափառ գալուստը Բոստով։

Նոր-Նախիջևանի քաղաքագլուխ Մ. Ն. Պալապանեանը, Նոր-Նախիջևանի պատգամաւորները ներկայացնելուց առաջ, Վեհափառին առանձին ուղարկութիւնը դարձրեց պ. Շուշանովի վրա, և որը լինելով Բոստովից, սակայն Նոր-Նախիջևանի մէջ մի եկեղեցի կառուց, ուստի խնդրեց, որ Վեհափառը օրհնէ նրան, և Վեհափառը օրհնեց Շուշանովին։ Պէտք է ասել, որ այս վերջին պարտը առանձին հեղինակութիւն չունի ոչ ուս, ոչ չայ հասարակութեան մէջ և պ. քաղաքագլխի խնդիրը բաւականին անտակտ էր և հետեւաբար ծանր և անախորժ տպաւորութիւն առեց մեզ բոլորիս վրա։ Այսուհետ, նա մանաւանդ, որ այն քանի մի խոսքերը, որ ասեց պ. Պալապանեանը իբրեւ քաղաքի ներկայացուցիչ, համակրելի, գեղեցիկ և աղղու խոսքեր էին... Նոր-Նախիջևանի հայ հասարակութիւնը պատգամաւորներ էր ուղարկել վաճառականների կողմից և մեջնաների դառնակարգից՝ հինգ գիւղեր՝ Թաղանթոգ, Ելսկ, Եփրատեղ, նոյնպէս Բոստովի հայ հասարակութիւնը, ունէին կայարանում ներկայացուցիչներ, ընդամենը ներկայացան 10—16 պատգամաւորութիւններ աղ ու հացով, չեղք սկուտեղներով վրա դրած։

Նոր-Նախիջևանի ուսանողներ և հրէաները նոյնպէս ուղարկել էին պատգամաւորներ. ընդունելով աղ ու հացը, Վեհափառը ասեց ուսանողին և հրէաներին, որ նա, առանց ազգութեան խտրութեան, օրհնում է ամեն մի աշխատող անձը, իսկ դառնալով՝ հրէաներին նա աւելացրեց՝ ձեռ հայր Աբրահամը և մեր հայրն է եղել և քրիստոնէութեան արմատները առնված են իսրայէլացիների կոծից...

Եղանակը հիւանալի էր. կայարանից դուրս մօտ 20—30 հազար ժողովուրդ անհամբեր սպասում էր Վեհափառին և երբ նա երևաց՝ անվերջ կեցեցները թնդացին։ Օրհնելով քաղմութիւնը՝ կաթողիկոսը նստեց կառք։ Ուղեւորութիւնը չեղք էր և գեղեցիկ։ Նոր-Նախիջևանի ծայրում, Ալէքսանդրեան պարտէղի առաջ կամար էր կառուցված կանաչեղէնով և դրօշակներով զարդարած։ Կամարի մի կողմը գրված էր՝ Հի հայ հասարակութեան Նոր-Նախիջևանայ, իսկ միւս կողմը՝ Հայրիկը հայոց օրհնելու որ դաս յանուն Տեառն։ Ս. Լուսաւորիչ եկեղեցին նոյնպէս զարդարված էր։ Խոսուն բազմութիւն ժողովված էր հրապարակի վրա. առմաստներն ունեցողներն անգամ չը կարողացան մտնել եկեղեցի, որովհետև չըմակայ փողոցներումն էլ ասեղ զցելու տեղ չը կար... Վեհափառը իջնանց պ. Կրամիլինիկեանի տանը, որը քաղաքի առաջին տունն է։

Որչափ մեզ համար ուրախալի էր մեր քաղաքում տեսնել հայոց կաթողիկոսին, նոյնչափ ցաւ էր իմանալ Լեոն վարդապետ Խօջայեանի մահւան լուրը։ Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվեց երկէ։ Վաղուց է նա հիւանդ էր, վաղուց է մենք սպասում էինք այդ բոթին և սակայն, երբ եղեկութիւնը իմացվեց, մեր ցաւը մեծ եղաւ։ Մենք ինչեցինք իսկոյն մի թերթի կծու խօսքերը՝ «Леоны не видать Нахичевани»։ Թող իմիթարվին այժմ և թերթի թղթակիցը և եսամօլ համալսարանականը՝ այսօր Լեոն վարդապետը դիակ է և նրա բարի եռանդը և գեղեցիկ իղէալները—այդ անխիղճ պարոնների խղճի խայթոցները,—մեռան այդ աղիւս երիտասարդի հետ։

Եւթմա Նոր-Նախիջևան, կրթված Լազարեան ձեմարան և աւարտած համալսարան՝ մաթեմատիկական բաժնում, նա չը դարձաւ քաղաքականի կարիերիստ։ Վեհափառ, անձնանկէր և բարի ձգտումներով ոգևորված, նա հեռացաւ աշխարհի հաճոյքներից, հլու աղիւս համոզմունքի ձայնին։ Նա մերժում է այն դասերը, որը առաջարկում են նրան Լազարեան ձեմարանում և Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցում, և մայր աթոռի խորանի առաջ ծառայելու համար՝ ուժից աւելի բնու շալակած, մտնում է Եւթմաձին վանքը, իբր ուսուցիչ ձեմարանի և ապա իբրեւ քրեդալ։ Դա ամենաներշնչիկ օրերն էին նրա կենքում. քրեդալի նա սիրում էր աշակերտներին և փոխադարձաբար որչափ աշակերտները սիրում էին նրան...

Եւթմաձին հեռանալը, մանաւանդ հեռանալը այն վսեմ գործից, որին նա նուիրել էր իրան ամբողջովին, մեծ ցաւ էր պատճառում նրան։ Եւտեսէք, համալսարանական, եռանդոտ, աղիւս վարդապետը մտնում է 30 տարեկանի իր նպատակներին չը հասած, ճանապարհին, Թիֆլիսի յետ ընկած սենեակներից մէկում ընկած...

Գրիգոր Չալխուչեանց

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Փետրվարի 20-ին

Տեղական գաղթականների թիւը Կարսում, վերջերս կատարված մանրամասն ցուցակի համաձայն, հետեւեալն է՝ հասակաւորներ՝ 315 արական, 283 իգական. երեխաներ՝ 329 արական, 244 իգական, ընդամենը երկու սեռի 1171 հոգի, որոնցից աշխատանքի ընդունակ են միայն շատ փոքր մասը։ Ապրում են զանազան յետ ընկած տեղերում ողորմելի վիճակի մէջ. հիւանդութիւնը և մահը բաւական տարածված են դրանց մէջ։

Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղը, ցանկանալով օգնել այդ մարդկանց՝ որոնց նրանց մինչև զարուն հաց բաժանել, սակայն հաց ստանալը գաղթականները բացարձակապէս մերժեցին. առարկելով, որ իրանց ցանկութիւն չունեն ուղարկել իրանց կանանց և երեխաներին՝ հաց բաժանելու խանութի առաջ ամեն օր ժամերով կանգնելու, ուր, որպէս թէ, նրանց խաղաղասկսում և նկատուողութիւններ են անում։ Վարչութիւնը երկու օր առաջ նիստ կայացրեց և որոշեց բաժանել 800 պուդ ալիւր չքաւոր գաղթականներին, մարդաբաւ լուր 1 պուդ հաշուելով։ Վարչանից կը սկսեն բաժանել։

Խօսելով Բարեգործական ընկերութեան մասին, մենք այս անգամ թող ենք տալիս մեզ մատնացոյց անել մի իրողութեան վրա, որը մեզ բաւական

աւանին խորթ է թվում։ Տեղական երիտասարդների մի խումբ, ինչ որ տարածախոսութիւն ունենալով վարչութեան հետ, մի տարուց աւել է ինչ խռովել է ընկերութեանից և բացարձակապէս հրաժարվել նրա գործունէութեան մասնակցելուց։ Մենք չենք հետաքրքրվում, թէ այդ քաղն անելու շարժառիթներն որքան արդար և իրաւացի են եղել։ Այդ դեռ մի կողմ. մենք չենք համակրում բողոքի այդ և դա՛նակ մի ճիւղի գործունէութեան դէմ, որ ապրում և գործում է, որի վարչութեան մէջ անընդհատ փոփոխութիւններ են լինում, և որին միանգամայն փոխելը ուրիշ ուղղութեան տէր անդամներով՝ հնարաւոր է երկու տարւայ ընթացքում։

Ուրեմն ինչու էք փախչում, ինչու էք խռովում. մտքը, շարժվեցէք. եթէ վարչութիւնը անընդունակ էք համարում գործ չինելու, եթէ նրա գործունէութիւնը թմրած և չնասակար էք համարում, հրապարակ դուրս եկէք երես առ երես, բացատրեցէք անդամների առաջ ձեր ցանկութիւնները, ձեր կարծիքները և առաջ բերէք ձեր կանխդատններին, և եթէ դուք իրաւացի էք, ձեզ կը լսեն։

Փախչելը և խռովելը ամօթ բան է, ամօթ է մանաւանդ երիտասարդների համար։

Ար. Այ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅ

Փետրվարի 16-ին

Թէ՛ դեռ ինչ աստիճան խայտառակ միջոցներով է կատարվում մեզանում ամուսնութիւնը,—այդ կարելի է եզրակացնել այն ակուր փաստերից, որ տեղի ունեցան այստեղ բարեկենդանի վերջին օրերին։

Շատերից երկու օրինակ միայն։—Տեղացի մի դաւալած մի շարքի առաջ պտտեցնում է մի օրիորդի լուսանկարը և փեսացուն է որոնում։ Բարեկենդանի վերջին օրերին գալիս է Թիֆլիսից հարսնացու օրիորդը իր մօր հետ, և իջնում դաւալքի տանը։ Վերջինիս կարգադրութեամբ իսկոյն ներկայանում է մի փեսացու, հաւանում է աղջկան և նշան է տալիս։ Սակայն դաւալքը դու չէ մնում փեսացուից. պահանջած 50 ռուբլու վարձատրութեան փոխարէն, 25 ռուբլի է խոստանում։

Չանցած կէս օր, փոխվում է աղջկայ տիրոջ տարածադրութիւնը։ Հանդէս է գալիս աւելի յարմար փեսացու։ Առաջինի նշանը անմիջապէս յետ են ուղարկում, յայտնելով թէ՛ աղջիկը չէ հաւանում։ Դաւալքը եռանդուն կերպով աշխատում է։ Երկրորդ փեսացուի հետ գործը վերջացնում է աղջկան թեմական սկսվում է պատրաստութիւնը։ Փեսացուն բողոքովն պատրաստ՝ հրաւիրում է հիւրեր և սկսում է հարսանիքի նախէսը։ Բայց հենց որ պատրաստվում են գնալ հարսնատուն, լուր է գալիս թէ՛ աղջիկը այլ ևս չէ ուղւում... Ոչ մի միջոց չէ օգնում գործը զուրկ բերելու համար։

Անցնում է մի միջոց, լուր է են, թէ նոյն աղջիկը նշանվել է մի գործակատարի հետ։ Լուրը ճշդվում է, բայց այդ երրորդ փեսացուի հետ էլ կրկնվում է նոյնը, ինչ որ նախկին երկուսի հետ։—Բայց տեսէք, վերջը այդ ևս խանգարում են...

Հանդէս է գալիս չորրորդ փեսացուն, մի ակցիդիանի, որը ընտելվում է դաւալքի բաղում։ Վերջինս յաղթող է հանդիսանում, բայց արդէն ուշ։ Վերջնական համաձայնութիւնը կայանում է շաքարի օրը, այնպէս որ պատկերու իրաւունք ձեռք բերելը ուղանում է։ Քահանաները հրաժարվում պատկեր։ Չէ օգնում նաև թեմական առաջնորդին գիւղը։ «Ակցիդիան» փեսայացուն վրդոված, փորձում է պատկերելու ուրիշ միջոցներով. այդ էլ չէ աղիւղվում... Այժմ աղջիկը իր մօր հետ Բալասաանի է. ասում են փեսացուն այնտեղ պահում է, որ Համբարձմանը պատկերեն...

Դաւալքային քաղաքործութեան այդ սոսկալի փաստը ընդհանուր խօսակցութեան նիւթ է դարձել այստեղ։ Ոչ պակաս ուղադրութեան արժանի է մի այլ դէպք, որը նոյնպէս մտքեր է զբաղեցնում։

Դերբենդից բերել են տալիս մի օրիորդ այստեղ պատկերել մի առեւտրականի հետ։ Գալիս է օրիորդի հետ և մայրը։ Օրիորդի գալուն պէս՝ ներկայանում է փեսացուն, աղջկայ մօրեղբոր հետ—մի օտը կար իսկ ձեռքը արտաւոր։ Օրիորդը չէ հաւանում, բայց ուղադրութեան չեն առնում։ Վերցնել են տալիս օրիորդի չափաւոր, տալիս են նշան՝ մատանի, ապարան

Հիւանդացոյններ թուում, ինչպէս յայտնի է, գրան-
վում էին լորդ Բոքսթընի, Բալթիւր և զիպլումատիա-
կան կորպուսի մի քանի անդամներու ինքնուէն-
ցայն պատճառով վարչական մի քանի հիմնա-
կութիւններու, օրինակ պոստում, հեռագրատան
մէջ, հիւանդանոցներու և այլն ծառայողներ
թիւը շատ պակասել է: Թատրոններէջ մի քանի-
սը փակվեցին ըստ դերասաններ հիւանդութեան
պատճառով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 փետրվարի: Երէկ տեղի ու-
նեցաւ ի Տէր հանգուցեալ Մեծ Խիսան Ալեքսէյ
Միխայլովիչի մարմնի փոխադրութիւնը Նիկո-
լանսկայա երկաթուղու կայարանից Պետրոպոլ-
սկայի տաճարը, ներկայութեամբ Թագաւոր Կա-
սրի, Թագուհու Կայսրուհու, Մեծ Խիսանուհի-
նէր, Մեծ Խիսաններ և այլ Բարձրագոյն անձանց:
Մարմնին զիւղադրելու համար ճանապարհ ընկան
Մեծ Խիսաններ Միխայլ Նիկոլայովիչ, Նիկոլայ
Միխայլովիչ, Գեորգի Միխայլովիչ և Ալեքսանդր
Միխայլովիչ: Մեծ Խիսան Սերգէյ Միխայլովիչ
ուղեկցում էր հանգուցեալ Մեծ Խիսանի մարմ-
նին Սան-Քիտիցի: Տաճարում միտրոպոլիտ Պալա-
զի հոգեհանգիստ կատարեց: Նոցա Մեծութիւն-
ները և Նոցա Բարձրութիւնները երկրպագու-
թիւն տուին հանգուցեալ Մեծ Խիսանի նշխարին:
Դազադի շուրջը ահագին քանակութեամբ պատ-
կան կան:

ՕՐԷՍԱ, 27 փետրվարի: Դատաւանական
պալատը, քննելով «Վազմիւրի և Կոլոմբիան»,
շահեաւոր երկու զոյգերու, ապացուցեալ
ճանաչեց երկու կապիտաններին միտրոպոլիտին
«Русское Общество» ընկերութիւնից եղող պա-
հանջը մերժեց: Եւ այլ կողմնակա պահանջն
ևս մերժեց: Եւ մի քանի պահանջները անշահ
չափով կամ պակասեցրած են կամ աւելացրած,
իսկ մեծ մասը առանց փոփոխութիւններ
թողցած:

ՊԱՐԻՉ, 27 փետրվարի: Խառնական, ֆրանսիա-
կան և անգլիական կառավարութիւններ
մօտ շնորհակալ լինական դեպքանը ճանապարհ
է ընկնում ղեպի Հոսոմ: Գետապանին յանձնարարեց
է վերադառնալ կառավարութիւններ գործակցու-
թիւնը խնդրել Նապոմիտի հետ խաղաղութեան
բանակցութիւնները սկսելու ժամանակ:

ԿՈՐԹՈՒ, 27 փետրվարի: «Պոլեարնա» Ձվեղ-
դա Նաւի վրա այստեղ ժամանեց Թագաւորուհի
Յիւստինի: Թագուհին, յունական Թագաւորի որ-
դին և աղջիկը գնացին Կորֆու: Թագաւորուհի
հետ տեսակցելու համար Նորին Բարձրութիւնը
չուտով կը շարունակէ ճանապարհը ղեպի Ալբի:
Կորֆու գնացող «Յարմիւնա» Նաւը, որի վրա
գտնվում է ուսուցչական, ծանօտագործի վրա
նստեց: Ուղարկված են Նաւեր ծանօտագործից
հանելու այդ Նաւը, բայց նրանց ջանքերը առ
այժմ ապարդիւն անցան:

ՎԻԵՆԱ, 27 փետրվարի: Լրագիրները հա-
ղորդում են, որ Ֆրանց-Յոսէֆ կայսրը, Վիլհելմ
կայսրի հրաւերով, կերթայ Վիլ Հիւսիսային կա-
նայի բացմանը ներկայ լինելու համար:
Վիեննա հասաւ Շաքրի-փաշան: Նա ունեցող-
րութեան կընդունելի կայսրից և կը հրաւիրվի
պալատական ճաշին:

ՍՈՅԻԱ, 27 փետրվարի: «Սոյալստի» լրագիրը
հաղորդում է, որ Յանկով այս օրերս Պետերբուրգ
կերթայ:

ԼՈՆԴՈՆ, 27 փետրվարի: «Daily News» լրագ-
րին կայսրից հեռագրում են, որ բրիտանական
զորքերի այս շարքով նշանակված զորախաղերը
յետաձգված են, որովհետեւ լրագրողներ ժամանակ
և պատուով երկրաշարժի լուրերի պատճառով ան-
զգուշութիւն կը լինէր կայսրին թողնել առանց
բրիտանական զորքերի:

ՆԻՒԵՐՈՒ, 27 փետրվարի: «World» լրագրի
խօսքով, Յիւստանը, տեղեկութիւն ստանալով
այն պայմանների մասին, որոնց հիման վրա Ես-
պոնիան համաձայնվում է խաղաղութեան դաշն
կապել, յայտնեց, որ համաձայն է ստորագրել
դաշնագիրը իրան առաջարկված ձևով: Տօկիոյ և
Պեկինի մէջ բանակցութիւնները կատարվում են
Միացեալ-Նահանգների դեսպանի միջոցով:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 մարտի: Երէկ տեղի ունեցաւ
Մեծ Խիսան Ալեքսէյ Միխայլովիչի մարմնի թա-
ղումը Պետրոպոլսկի տաճարում: Թագաւոր
ներկայ էին: Թագաւոր Կայսրը, Մեծ Խիսանուհի-
ները և Մեծ Խիսանները: Հանգուցեալ Մեծ Խի-
սանը թաղված է Մեծ Խիսանուհի Օլգա Ֆեոդո-
րովնայի գերեզմանի հետ մի շարքում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 մարտի: Այսօր, երկրորդ ներ-
քին փոխադրութեան կատարված խաղաղութեան
ժամանակ տարան հետեւալ տունները, 1199/28—
200 հազար. 9313/37—75 հազար. 14044/32—
40 հազ. 1461/30—25 հազ. Տաւ հազար. 17737/38,
15764/12, 5274/36: Ութ հազար. 14973/36, 15700/37,
421/2, 17505/24, 12046/32: 24 հազ. 2042/5, 15
379/37, 308/15, 14844/50, 9489/31, 9682/44,
16605/27, 18506/11 Մի հազար. 2138/12,
12525/19, 13767/31, 13372/40, 1312/45,
3756/9, 19823/26, 1406/34:

12660/15, 5667/33, 4365/10, 18279/5, 1423/44,
18297/18, 4967/26, 1248/25, 8796/45, 4744/47,
5566/33, 11027/38:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՆՈՒՄ Է

ՍԼԱՎԱՆԱԿԱՆ Ա. Աղաւանդ: «Մշակը» ձեռ
կանոնադրապէս ուղարկվում է: Նիւթ անկանոն
են հասցնում,—մեղաւորը անկանոնած պօստն է:
Որպէս զի որ և է թիւրմացութիւն չը լինի,
տուեցինք պօստին ամենամարման հասցէ:

ՄՈՍԿՎԱ. Հայ ուսանողներին: Ձեր հեռագիրը
օտաւանք փետրվարի 28-ին, երբ Լոնս վարդա-
պետ Խոջայեան արդէն հողին էր յանձնված:
Բարեհաճեցէ յայտնել, արդեօք ձեր կողմից պը-
տակ ղեկնը հանգուցեալի գերեզմանի վրա, թէ
զուցէ աւելի բարձր համարէր,—քանի որ արդէն
թաղումը տեղի է ունեցել,—այդ փողը յատկա-
ցենք նրա աղքատ և կարօտ աշակերտներին, որոնց
հոգսը քաջում էր վարդապետը նոյն իսկ իր մա-
կան օրպէսներին:

ՊԱՐՍՅԱՍՏԱՆ. Ն շաբաթ. Յարութիւն Ներ-
սէսեանց. Ձեր ուղարկած փողը, 28ր. 38 կօպէկ,
ստացանք Ս. Հաննապարտանի միջոցով: Բարեհա-
ճեցէր կարդալ «Մշակի» № 12-ի առաջնորդը:

Խաղաղի՝ ԱԼԷՔԱՆԴՐ ԲԱՆԱՆԻՍԻ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔԱՆԱՎԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, վարձուցով արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբու-
ժութեան, սիրելի և վնասական հիւանդու-
թիւններին:
Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեար-
դային հ. հ. ԲՈՒԿՈՎԱՆԻ—10—11 ժ. ներքին, երե-
կանների և կանանց հ.
Վին-Քիլի ՏՈՒՐԿՈՎ—11—12 ժ. կանանց հ.
Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—11—1 ժ. ականջի, կո-
կորդի, թիւի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երե-
կայոց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՐԿԻՆ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէղի և
սեռական օրգանների հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—7—7 1/2 ժ.
Ի. Ե. ՖԱՆՆՈՎ—7—7 1/2 ականջի, կոկորդի,
թիւի և նեարդային հ. երկուշարթի, չորեքշա-
րթի և ուրբաթի:
Ա. Գ. ԳՈՐԿԻՆ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէղի, խիւի, ա-
րեան, կաթի և այլն:
Վճար 50 կ.: Համախորհրդի (կոստիլիումի) դ
օպերացիայի համար տաւանձին: Հիւանդանոցումը
ընդունվում են և ԳԻՆԵՐՈՒԻԿ ՀԻՒԱՆԴԱՆՆԵՐ:
Հիւանդանոցի վերաւանդը
բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

Հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ
առաջիկայ կիրակի, մարտի 5-ին, առաւօ-
տան 12 ժամին, սուրբ պատարագից յե-
տոյ պիտի կատարվի ՄՈՂՆՈՒ Ս. ԳԵՌԳ
ԵՒ ՏԱՓԻՒՍԱՂԻ Ս. ԳԵՌԳ եկեղեցիների ե-
րէցփոխանների և հաշուատեսների ընտ-
րութիւնը, ուստի նոյն եկեղեցիների ծխա-
կան ժողովուրդները հրաւիրվում են նշա-
նակեալ օրը իրանց եկեղեցիները՝ ընտրու-
թեան մասնակցելու համար:

Տիկիսի ա. մ. եկեղեցիների գործակալ՝
Գլխ. քահ. Աղանեանց
(№ 25) 1—2

ԼԱՅՏԻՅԻՆ ՀԱՅ ՀԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԲՆԿԵ-
ՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ, ընկերութեան
պարտք ունեցող անձերուն ժամանակին
արդէն նամակով յայտնել յետոյ, այժմ
վերստին հրապարակաւ կը յիշեցնէ,
որ փութան իրենց պարտքերը ուղարկել,
քանի որ վարչութիւնս ալ շուտով իր
տասնամեակի հաշիւը պիտի է հասարա-
կութեան տալ: (№ 20) 3—4

Կ Ա Ր Ճ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ո Վ
ՀԱՅՈՒԱԳԻՏԻՑ ԲՈՒՍԵՂԵՆԵՐԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԻՍ
Երևանեան հրապարակի վրա, Տէր-Ասատուրովի տանը
ԵՂԲ. ՄԱՐԻԳՕ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԵԼԳԻԱՅԻՑ
Այդպէս հիւանդներ, պտղապահութիւն և ծաղկապահութիւն, պատիւ
ունեն ծանուցանել, որ բերել են ահագին քանակութեամբ վաճառելու
համար բուսեղեններ և զանազան տեսակ պտղաբեր ծառեր: Ահագին
քանակութեամբ ծաղկաբուսեր և թուփեր: Յանձն են առնում նմա-
նապէս այդեղենութիւն և ծառերի ու թուփերի անկէլը, որոնք կը
գնվեն իրանց մօտ: Ստացված են դարձեալ ուրիշ բուսեղեններ:
(№ 24) 2—5

Երևանեան հրապարակի վրա, Տէր-Ասատուրովի տանը, բացված է
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԻՍ
Նկարիչ Ղազար ԱՐՏԱՋԵԱՆԻ՝ մասնակցութեամբ նկարչներ ԲԱՇԵՆԱՎԱՆԻ,
ԳԱՐԱՍԵՎԻ, ՋԱՆԿՈՎԱՆԻ, ԿՈՂԻՆԻ, ՊԱՐԱՆԵՎԱՆԻ, ՇԱՄՇԻՆԵԱՆԻ, քանդակագործ ԽՕ-
ԴՈՐՈՎԻՉԻ և այլոց:
Պատկերահանդէսը բաց է առաւօտան 10 ժամից մինչև երեկոյան 6-ը:
ՄՈՒՏԲԸ արժէ 30 կ., աշակերտների համար 15 կ., մուտքի մի մասը յատկացրած
է Թիֆլիսի զեղարուեստական դպրոցին:
(№ 21) 4—5

ԼԱՋԱՐԵԱՆ ՀԵՄԱՐԱՆ ԱՐԵՎԵԼԱՆ ԼԵՋՈՒՑ, ՄՈՍԿՎԱ
Հիւանդների վարչութիւնը ունի վաճառելու
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ
Հետեւեալ սակաւթիւ հեղինակութիւններն ու հրատարակութիւնները.
1) Վարդանայ Բարձրեղեցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, ա. տ. 2 ր. 50 Գ.
2) Ստեփաննոսի Սինեա եպիսկոպոսի Պատմութիւն տան Սիոական, 1871, ա. տ. 3 ր. —
3) Միխայլայ Արեւմտեցւոյ Պատմութիւն Հայոց, 1860, ա. տ. 1 ր. —
4) Всеобщая История Варлана Великого (XIII в.), перевод с армян-
ского, с объяснениями и приложениями, 1861. 4 ր. —
5) Всеобщая История Степаноса Таронского Асехика по прозванию (XI в.)
пер. с армянского, с объяснениями и приложениями, 1864. 4 ր. —
6) Синодальное слово Нерсеса Ламбронского (XII в.), пер. с арм. 1864. 2 ր. —
7) Шарахант (Ծարական) богослужебные каноны и пѣсни армянской Вос-
точной Церкви. Полный перевод. 1879 (մնացել է միայն մի քանի օրինակ)
8) Армянскія надписи въ Карѣѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго,
тексты и переводъ 1881. 1 ր. 50 Գ.
9) Очеркъ Исторіи Армянской Восточной Церкви, 1864. — 65 Գ.
10) Очеркъ религійн изслѣдованіе армянъ (изслѣдованіе) 1864. 1 ր. 50 Գ.
11) Отвѣтъ на замѣчанія г. Патканова, 1874. — 65 Գ.
12) Моисей Хоренскій и древній эпосъ армянскій (изслѣдованіе) 1881. 1 ր. —
13) Династическій списокъ Хайкидовъ (изслѣдованіе)
14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисѣ и Глебѣ) по Арм. Четыи-Минеемъ
(пер. с армянского) — 75 Գ.
15) Сказанія о Свв. Өаддѣѣ и Варөоломѣѣ апостолѣхъ Арменіи (пер. с ар-
мянскаго). 75 Գ.
Գրքերի գնքերը հաշված են ճանապարհածախով հանդերձ:—Այս գրքերից գնել ցանկացողնե-
րը թող բարեհաճեն դիմել իրանց պատուէրներով Հիւանդների վարչութեան այսպիսի հասցեով:
Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ (Москва)
Նոյն տեղում վաճառվում է նոր լոյս տեսած
«ИСТОРИЯ АРМЕНИИ МОИСЕЯ ХОРЕНСКАГО»
Новый переводъ М. Әмина с армянскаго языка на русскій (с примѣчаніями и приложе-
ніями), Москва, 1893.—Цѣна 2 р., сь пересылкою 2 р. 25 к. (№ 14) 3—3

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԹՎԱՆՈՒՄ
Խնդրում ենք հայ խմբագիրներին, հեղինակներին և բարեսէր անձանց, որ իրանց
օգնութիւնը չը զրկանան Սալմաստի հայոց այս միակ դրադարանին, որի ձոխացումը ըզ-
գալի կերպով կը նպաստէ գաւառիս իրավանք գործին:
Խնդրում ենք նուիրատուներին դիմել այս հասցեով. Персия, Salmast, Սալմաս-
տի հայոց գրադարանին, Հաֆի վանուում:
Սալմաստի Հաֆի վանուում գրադարանի վարչութեան: (№ 10) 6—10

Կ Ի Ր
Գուլթայի ամենալաւ տեսակը, ուղարկվում է վաճառներով: Պատուէրները ընդուն-
վում են Թիֆլիսում: Դիմել Բոլշայա-Վոլոգդայայ, № 24, ա. Լալանովի, ինժեներ Լեւո-
դանիկին, Գուլթայիւում—Գուստաւ Գալիլիովիչ Մուրեզիկին: (Ծ. № 23) 3—3

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ո Ւ
ԹԻԻՐԲԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ
Թիֆլիսում վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, նոյնպէս և Կիւրգուլայա փո-
ղոցի վրա հետեւեալ խանութներում: Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագաղինում և
Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում:
(№ 144)

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ
ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉԲԻ (զիւստոր պահեստը Ռուսաստանի համար
«ԵԱՎԱ» ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է կօշիկալ և դեղային ապրանքների բոլոր լաւ մագաղիններում 1/1,
1/2, 1/4 և 1/8 կիւրգամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէի համաշխարհային ցուցա-
հանդիսում 1894 թւին:
(№ 151) 13—50